Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
հունիսի 5-ի N 728-Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԶԵՆՔԸ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ԿՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) ծառայողներին պահելու և կրելու իրավունքով հատկացված զենքը պահելու և կրելու հետ կապված հարաբերությունները:

2. Պահելու և կրելու իրավունքով զենք ստացած ծառայողը պարտավոր է սարքին, անվտանգ և մաքուր պահել ստացած զենքը:

3. Զենքի կորուստը բացառելու նպատակով այն պետք է համապատասխան ամրակապով հուսալիորեն ամրացված լինի ծառայողի հագուստին:

4. Արգելվում է ծառայողի կողմից զենք կրելն առանց համապատասխան հարմարանքների (ատրճանակի պատյան, ամրակապ, ինքնաձիգի գոտի և այլն):

5. Զենքը ծառայողի բնակության վայրում պետք է պահվի հուսալի փական ունեցող մետաղյա պահարանում՝ միջոցներ ձեռնարկելով զենքին այլ անձանց հասանելիությունը բացառելու համար:

6. Քաղաքացիական հագուստ կրող ծառայողը զենքը կրում է քողարկված:

7. Ծառայողին արգելվում է մերկացնել զենքը, փոխանցել այլ անձանց կամ թողնել առանց հսկողության՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

8. Ծառայողի՝ զենքով ծառայողական գործուղման մեկնելու դեպքում գործուղման վկայականում նշվում են զենքի տեսակը, համարը, արտադրության տարեթիվը, փամփուշտների թիվը և հաստատվում տվյալ ստորաբաժանման պետի կնիքով:

9. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ծառայողը զենքով գործուղվում է միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում և կարգով:

10. Հայաստանի Հանրապետության տարածքում գործուղման դեպքում՝ գործուղման վայրում սույն կարգի 2-7-րդ կետերով սահմանված պայմաններն ապահովելու անհնարինության դեպքում գործուղված ծառայողը զենքն ի պահ է հանձնում մոտակա ոստիկանության տարածքային ստորաբաժանման հերթապահ մաս:

11. Ծառայողին հատկացված զենքի, դրա տեխնիկական վիճակի, ինչպես նաև զենքի լրակազմի, օժանդակ միջոցների առկայության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է՝

ա) անմիջական ղեկավարի կողմից՝ յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ.

բ) սպառազինության համար պատասխանատու ստորաբաժանման (ծառայողի) կողմից՝ 6 (վեց) ամիսը մեկ անգամ:

12. Ծառայողը պարտավոր է զենքը հանձնել սպառազինության համար պատասխանատու ստորաբաժանում, եթե

ա) օրենքով սահմանված կարգով կասեցվել են նրա լիազորությունները.

բ) ծառայողն ազատվել է պաշտոնից.

գ) առկա է բժշկական եզրակացությամբ հաստատված զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդություններ և վիճակներ:

13. Ծառայողը ստացիոնար բուժման կամ արձակուրդ մեկնելիս, ինչպես նաև սույն կարգի 2-7-րդ կետերով սահմանված պայմաններն ապահովելու անհնարինության դեպքում զենքը ժամանակավորապես ի պահ է հանձնում զինանոց կամ զինապահեստ:

14. Ծառայողը, անմիջական ղեկավարի կարգադրությամբ, պարտավոր է զենքը հանձնել, եթե ծառայողի կողմից խախտվել են սույն կարգով նախատեսված զենքը պահելու և կրելու պայմանները:

15. Սպառազինության համար պատասխանատու ստորաբաժանում հանձնած զենքի վերաբերյալ համապատասխան գրառում է կատարվում զենքի հանձնման և ընդունման մատյանում:

16. Զենքը գործադրելու և օգտագործելու, ինչպես նաև զենքը կորցնելու կամ վնասելու դեպքերում ծառայողն անմիջապես հայտնում է վերադասության կարգով, ներկայացնում զեկուցագիր և ձեռնարկում միջոցներ՝ կորած զենքը որոնելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

06.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ